ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2216 Կոտայքի մարզ գյուղ Հացավան, վարչական շենք 1-ին փողոց թիվ 2 հեռ. 094519030

*20 մարտի 2014թ*
*N 47*

*ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ*

*<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներին համաձայն՝ Ձեզ եմ ուղարկում Հացավան համայնքի ավագանու 2014թ.մարտի 19-ի թիվ 03 արտահերթ նիստի որոշումները:*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Շ.ՍԱՐԳՍՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզի
Հացավան համայնք,
Հացավն,վարչական շենք 1-ին փողոց թիվ 2, հեռ 094519030

ՈՐՈՇՈՒՄ
19 մարտի 2014 թ.N 10-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է**

Հաստատել համայնքի ավագանու 2014 թվականի մարտի 19-ի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը

1. Համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 12-ի N 08-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

_____ Անուշավան Խաչատրյան

_____ Միեր Ղարիբյան

_____ Հրայր Հովհաննիսյան

_____ Սերոբ Սարգսյան

_____ Վարդան Պետրոսյան

Համայնքի ղեկավար՝ Շ.Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Հայավան համայնք,
Հայավն,վարչական շենք 1-ին փողոց թիվ 2, հեռ 094519030

ՈՐՈՇՈՒՄ
19 մարտի 2014 թ.N 11-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 08-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է**

1. Համայնքի ավագանու 2014թ-ի փետրվարի 12-ի N08-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթախմբում կատարել փոփոխություն՝ 2013թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 34-Ն որոշման հավելվածի վերնագրի՝ «ՀՀ Կոտայքի մարզի Հացավան համայնքի 27-ը դեկտեմբերի 2013թ.տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» փոխարեն գրել«Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնքի վարչական տարածքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը» վերնագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Անուշավան Խաչատրյան

Միեր Ղարիբյան

Հրայր Հովհաննիսյան

Սերոբ Սարգսյան

Վարդան Պետրոսյան

Համայնքի ղեկավար Շ.Սարգսյան

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Հացավան համայնքի
ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 27-ի N 37 -Ն որոշման
փոփոխված 2014թ.մարտի 19-ի N 11-Ն
որոշման

ՍԱՀՄԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

ԿՈՂՄ 5 ԴԵՄ 0 ՁԵՌՆՊԱՀ 0

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՍԱՀՄԱՆԵԼ Է ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) Սույն հավելվածի 1-ին կետի << ա>>ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես

ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման , վերականգնման , արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների , վերակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում ,կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման ,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների,վերակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի<<ա>>ենթակետով սահմանված դրույքաչափերի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 2500 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1000 դրամ.

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ.

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա) բացոթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի ,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար ընթացիք տարվա համար սահմանել 150000 դրամ.

գ) խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմանել 30000 դրամ.

դ)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմանել 50000 դրամ.

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում , կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմանել 10000 դրամ.

զ) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար սահմանել՝ 50000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սահունաները), խաղատները ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների (սահունաները) համար՝200000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

ե) շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնորինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմանել՝ 500 դրամ.

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիք տարվա համար սահմնել՝ 10000 դրամ.

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ.

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ.

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝2000 դրամ.

Համայնքի ղեկավար՝ Շ.Սարգսյան

2014թ. մարտի 19